

ՀԱՅՔ

Հ Ա Ն Դ Ի Ս

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ա Մ Ե Ն Ա Մ Ս Ո Յ 1 Ի Ն Ե Ի 15 Ի Ն
 Յէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
 Editor — M. S. GABRIEL M. D.
 202 W. 23d St., New York.
 Տարեկան բաժնեգրին է ամեն երկրաց համար 2 թալէն կամ 10 ֆրանք:
 Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն:

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց Յառաջդիմութիւնն Օսմանեան իշխանութեան ներքեւ — Թէ Ինչպիսի Խճճօրիմութիւն պէտք է Օսմանեան Հայաստանի — Նամակ Կ. Պոլսէն — Նամակ Այնթապէն — Նամակ Թրոյէն — Մարգարամ — Թէ Ամերիկայի Հայերն ինչ օգտակար արհեստներ կրնան սովորիլ — Քաղաքական լուրեր — Ազգային և զանազան լուրեր:

Ե.ՉԳ

Մեր բաղձանքն է փոխան 8 երեսի 12 երես ընել «Հայք» գինն նոյն պահելով: Բայց խոհեմութիւն չեմք համարիր այդ զարգացում այժմէն տալ մեր թերթին քանի որ 1892 տարւոյ բաժանորդաց թիւն անծանօթ կը մնայ: Կ'երևի թէ զգալի աճում մի պիտի լինի բաժանորդաց թիւսն մէջ, բայց շատ դանդաղ կը շարժին կէսք:

Կը խնդրեմք ուրեմն մեր այն յարգոյ բաժանորդներէն որք ցարդ վճարած չեն, փութով յղել իրենց բաժնեգրին մանաւ առ փոստով (մըմի օրտըրով) կամ այլ մի ջոցալ:

Նաև ի դէպ կը համարիմք ծանուցանել թէ 3 ըրդ թիւէն սկսեալ պիտի դադարիմք նմոյշ օրինակ յղել անոնց որք անցեալ տարի ընդունեցան թերթս և չհաճեցան վճարել, և այս տարի ալ կը վարանին վճարել: Զրի թերթ կարգալն քաջալերելու միտք չունիմք:

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ «ԱՐԵՒԵԼԻ» ԼՐԱԳՐԻՆ

ՀԱՅՈՑ ԵՄՈՒՋԻՄՈՒԹԻՒՆՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ

ՏՄԱԿԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

Կ. Պոլսոյ Հայ մամուլն գլխաւոր ներկայացուցիչն, ԱՐԵՒԵԼԻ, պատրիարքական վերջին կոնգրակին վերայ խօսելով կ'ըսէ թէ Հայ ժողովուրդն Օսմ. փառապանծ Տան Հովանաւորութեան ներքեւ արտօնութիւններ կը վոյելէ «իւր ներքին զարգացման և իմացական ու բա-

րոյական յառաջդիմութեան հետամտելու»:

Կ'նդունիմք թէ Մամուլն ի Տաճկաստան կարի փափուկ կացութեան մէջ է, բայց ցաւալի է որ «ԱՐԵՒԵԼԻ» կարծէ պարտաւոր լինիլ այնքան հիմնական կետի վերայ այնպիսի թիւր գաղափար ծաւալել Հայ ժողովուրդեան մէջ:

ԱՐԵՒԵԼԻ, որո՞ւ Հովանւոյն ներքեւ է որ Հայ ժողովուրդն ի հեճուկս իւր ճարակութեան և աշխատասիրութեան, ի հեճուկս իւր արհեստաւոր լինելուն և ի հիւճուկս իւր յուռթի հոգոյն՝ կ'աղքատանայ ամ ըստ ամէ, և բիւրք կը տառապին յերեսաց յարաճուն չքաւորութեան:

Որո՞ւ Հովանաւորութեան ներքեւ է որ կը չորնան աշխարհիս լաւագոյն գաւառներն, կը կարտուին կ'ըսպառին անտառներն, կ'անշինանան չէնք, կ'աւերին աւանք, անմշակ կը մնան դաշտք, դրախտավայր Հայաստանն աւազակաց քարայրի կը նմանի և այն պատմական Եփրատ, որոյ յուռթի Հովտին վերայ երբեմն ծաղկեցան քաղաքակիրթ և հզօր պետութիւնք, նոյն ինքն Եփրատ գետն ասեմ, անխնամ տարածուելով յանհուն ճահիճս՝ կը մեռնի:

Օսմանեան փառապանծ Հովանաւորութեան ներքեւ է չ'որ Հայ ժողովուրդն կը գտնէ իւր յառաջդիմութեան ամենակերպ խոչընդոտներ. — որբանոց բանալ կ'ուզէ և հրաման չտրուիր, վարժարան կառուցանել կը բաղձայ եւ արտօնագիր չտանար, գիրք հրատարակել կ'ուզէ եւ չկրնար, լսարան՝ ընթերցարան՝ թատրոն բանալ կը ցանկայ եւ կ'արգիւտի, իւր ուղղային հաստատութեանց ի նպաստ կամաւոր հանգանակութիւններ ընել կը ձեռնարկէ եւ չեն թոյլ տար:

Իմացական և բարոյական զարգացում հո՞ն ուր սուտն և չողոքորթութիւնն գոյութեան պայմաններ դարձած են, հո՞ն ուր աւազակութիւնն կը վարձատրուի և մարդասիրութիւնն կը պատժուի, հո՞ն ուր ինքնապաշտպանին համար բանտ կայ և հարստահարչին պատուանշան, հո՞ն ուր ուշիմն ստիպուած է նախանձիլ ապուշին, և ուր զգայուն սիրան քարանալ կ'ուզէ սրտաճմլիկ տեսարանաց զիմանալու համար, հո՞ն ուր հարստութիւնն վտանգ մ'է գի չիք ընչից և վեհաց ապահովութիւն, և ուր գեղեցիկն իսկ կը փորձուի անիծել իւր գեղեցկու-

թիւն վասն զի չիք պատուոյ ապահովութիւն, հո՞ն ուր նուէն կը նախանձի փուշին և հասկն տատասկին, հո՞ն, Օսմ. փառապանծ գահուն հովանաւորութեան ներքե՞լ:

Արեւելք, ըսէ արեւուդ համար, ո՞ւր կընցունել կ'ուզես այդ քո անհամ յայտարարութիւն, որոյ անհատնում հերքումներն նոյն իսկ անուս ժողովուրդն ամեն օր կը տեսնէ, կը շօշափէ, կը զգայ և կը կրէ:

Բ

Պատրիարք Աշքեանն, Արեւելք և բազում ուսեսալ Հայեր կան որք այս իրողութիւններն չուրանալով հանգեր՝ կը հաւատան թէ պէտք է Բ. Դրան կռնակն ծեծել, որպէս զի մեր ներքին կրթական ձեռնարկներ յառաջ տանել և ժողովուրդն զարգացունել կարենամք: Ծառերն կ'ըսեն թէ յորմէ հետէ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ մի երևան հանցինք և գանգատիլ սկսանք իւրու եւրոպայի մեր վիճակ աւելի վատացաւ և մեր դարաւոր արտօնութիւններն ալ կորուսանել սկսանք: Ուրեմն խրատուինք այս վերջին 15 տարուան դառն փորձէն, և քանի որ մանաւանդ Եւրոպա ալ մեզ չհամակրիր, չահինք Սուլթանին սիրան և ջանանք անդորրութեամբ յառաջ գլխել:

Տաճկաստանի մէջ այս է շատ կրթեալ Հայերու կարծիքն, և Պատրիարք Աշքեանի և ոչ սակաւ պաշտօնականաց ազգային քաղաքականութիւնն:

Սխալ կարծիք, անհիմն քաղաքականութիւն:

Պարզեք իւր բոլոր ահաւոր մերկութեան մէջ այն կետ թէ ամենաւր է որ Հայ ժողովուրդն զարգանայ Բ. Դրան վարչութեան մերքե:

Գ

Պէտք է կարծել թէ այս Վեդրին կամ այն կըրթական նախարարին քաղաքականութենէն կամ այս անուն Սուլթանին համակրութենէն կարուսն ունի Բ. Դրան վարմունքն մեր ժողովուրդեան հետ: Աւելի խորին և ընդհանուր պատճառ կայ, օրէնք կայ որմէ կը բղխի օսմանեան քաղաքականութիւնն նկատմամբ Հայոց:

Ո՞րն է այն օրէնք:

Տիեզերական Պատմութեան իմաստասիրութիւնն որոշապէս ցուցած է թէ ժողովրդոց քաղաքական դրութիւնն նոցա կրօնական հաւատոյն համաձայն եղած է միշտ: Միութեան օրէնք մի կայ որ ամէն բանի կը տիրէ: Ազգ մի ինչպէս կը խորհի կրօնական խնդրոց մէջ, նոյնպէս կը խորհի աշխարհական խնդրոց մէջ: Ի՞նչ ըսկզբունք որ ընդունած է հոգեւոր իրաց կարգին համար, նոյնն ընդունած է աշխարհական կարգին մէջ, չկրնար այլապէս շարժիլ. հոգեբանական օրէնք մ'է այս:

Մահմետական կրօնն, որ խիստ միաստուածութիւնն ունի իբրեւ վարդապետական հիմն, ամբաժանելի կերպիւ լծակցած է բացարձակ միապետութեան հետ: Աշխարհ տեսած է մահմետական ու է ժողովրդի մէջ պետական ուրիշ ձև, և չպիտի երբէք տեսնէ: Խորհրդարանական դրութիւն մուծանելու փորձ մ'եղաւ Տաճկաստանի մէջ բայց չյաջողեցաւ: Եւրոպական ազդեցութեան ներքեւ յակամայից կատարուած փորձ մ'էր այն, և հակամաստասիրական է սպասել որ նոյնպիսի փորձ մի Թրքերն իրենք յաջողութեամբ կատարեն երբէք՝ ցորչափ մահմետականութիւնն մնայ նոցա կրօնն: Ոչ թէ հանրապետութիւնն այլ նոյն ինքն խորհրդարանական դրութիւնն, չափաւորեալ միապետութիւնն անհաշտելի է մահմետականութեան հետ:

Աւելին կայ: Մահմետականութիւնն ոչ պարզ միապետականութեան լծակինն է, այլ աստուածապետականութեան: Սուլթանն ոչ թէ միայն թագաւոր է այլ և յաջորդ Մուհամմէտի: Մահմետականութիւնն բոլորովին հակառակ է եկեղեցին պետութենէն, կամ կրօնական կարգերն աշխարհականէն բաժնելու քրիստոնէական գաղափարին: Մահմետական պետութիւն մի չկրնար երբէք

ընդունիլ ոչ—մահմետական քաղաքացի, ցորչափ հաւատարիմ մնայ իւր կրօնական սկզբանց: Եւրոպեան ճընշման ներքեւ կրնայ խաթմեր ստորագրել, զքրիստոնէայս հաւասարապատիւ քաղաքացի հռչակել թրքաց հետ, բայց իրօք, գործնականին մէջ այդ անհնարին է, և ով որ յուսայ թէ Հայերն, քրիստոնէայ մնալով, կրնան քաղաքացւոյ իրաւունք վայելել Օսմանցւոյ հետ, նա իւր ագիտութիւն միայն կը ցուցնէ:

Քաղաքացի ըսինք, և քաղաքացւոյ իրաւանց սկնարկեցինք, բայց պարտ է թիւրիմացութեան տեղի չթողուլ այդ մասին: Մահմետական կրօնն իրաւունքի խնդիր չպարունակեր: Նոյն ինքն մահմետական հաւատացեալք քաղաքական իրաւունք չունին, ո՞ւր կը մնան լայաններն: Ըստ մահմետական կրօնի, հաւատացեալն պարտի հնազանդիլ իշխանութեան, և պատերազմիլ անհաւատից դէմ մինչև որ բոլոր կռապաշտք, Հրէայք եւ քրիստոնէայք կամ մահմետական լինին կամ գոնէ մահմետականաց հպատակ: Ըստ այսմ մահմետական անհատին բոլոր առաքինութիւնն կը կայանայ անպայման հրնազանդութեան մէջ առ իշխանն: Նորա պատերազմն անհաւատից դէմ է, ոչ թէ ինքն իրեն դէմ. նա ներքին պայքարի հետ գործ չունի: Նորա համար ներքին բարոյական զարգացման հոգ չկայ: Նորա կամքի կարողութիւնն դատապարտեալ է տղայական վիճակի մէջ մնալու, ինչպէս այն ամենայն դրութեանց մէջ ուր հրնազանդութիւնն է բարոյականի բովանդակութիւնն:

Դ.

Վերի տեսութեանց տրամաբանական եզրակացութիւններն կարելի է առանց երկարաբանութեան յառաջ բերել. —

—Թէ Օսմանեան Պետութիւնն միշտ բացարձակ միապետական կամ աստուածապետական պիտի մնայ:

—Թէ Թուրք ժողովուրդն տղայ, անզարգացեալ մընալու դատապարտեալ է իւր կրօնի շնորհիւ, և թէ բոլորովին ունայն են այն ջանքեր որք Սուլթանին հոգածութեամբ կը լին այժմ վարժարաններն բազմացնելով Թուրք ցեղն կրթելու: Թուրքերն անընդունակ պիտի մընան եւրոպեան քաղաքականութիւնն ըմբռնելու և իւրացունելու ցորչափ մահմետական հաւատքով տոգորեալ են: Եւրոպեան քաղաքակրթութիւնն քրիստոնէական է հապէս, և ի սպառ անմարսելի է մահմետական Թրքաց:

—Թէ Հայ ժողովուրդն քրիստոնէայ՝ մեծապէս դժբաղդ է մահմետական վարչութեան ներքեւ ինկած լինելով, և իւր ներքին զարգացումն անհնար է, անգործնական է ցորչափ մահմետական սկզբանց վերայ հիմնեալ կառավարութեան հպատակ մնայ: Թուրքն ոչ միայն չբաղձար այլ և չկրնար թոյլ տալ որ Հայերն եւրոպայի քրիստոնէական քաղաքակրթութիւնն իւրացունեն և զարգացունեն:

—Թէ Օսմանեան Հայաստանն Սուլթանին հարկատու բայց բոլորովին ինքնօրէն նահանգի վերածելու պարտին աշխատիլ ամեն այն Հայեր որք ազգին զարգացման անկեղծ բաղձացող են, և այն ամեն եւրոպացիներ որք արեւելքի մէջ եւրոպեան քաղաքակրթութիւնն ծաւալել կը ցանկան:

Ջանացինք ահագին խնդիր մի ամփոփել կարճ յօդուածի մի մէջ: Կը յուսամք բանիմաց ընթերցողն իւր անձնական խորհրդածութեամբ կ'ընդարձակէ զայն: Ինչ որ մահմետական կրօնի սկզբանց մասին ըսինք, այնպիսի բաներ են զորս պարտի ճանաչել ամեն Հայ, և կը պնդեմք թէ պատրիարք, խմբագիր, դատաստու կամ ազգային գործիչ լինելու արժանի չէ Հայ մի որ անգէտ է այս սկզբանց:

ԹԵ ԻՆՉՊԵՍԻ ԻՆՔՆՕՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏԲ Ե ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀԱՆՁՄԱՆ ԱՆՏԵՂՈՒԹԻՒՆ

Ա

Այն հարց թէ ինչպիսի կառավարական դրութիւն պէտք է հաստատուի Հայաստանի մէջ երբ ինքնօրինութեան բաղձաքանակ օրն գայ, կրնայ վաղաժամ նկատուիլ, այլ ի դէպ կը համարուի մի քանի տող ևս այդ ինքնօրինութեան շնչակեանց թելադրութեան պատասխանած լինելու և միանգամայն հանրային կարծիքն շինելու նպատակով:

Ընթերցողք կը յիշեն թէ «Հայք»-ի անցեալ տարւոյ 22-դ թուով պարզեցինք թէ Ընկերվարականութիւնըն վաղաժամ է Հայոց համար նոյնինքն Ընկերվարական հայեցակետով: Այժմ հարկ է որ բուն Ընկերվարականութիւնն քննադատեմք:

Ընկերվարականութիւնն այն վարդապետութիւնն է որոյ համեմատ պէտք է ամբողջ ընկերութիւնն վերակազմել տնտեսական հաւասարութեան հիմանց վերայ, հողն, դրամագլուխն, երկաթուղին եւն, ընել ըստացուածքն բոլոր ժողովրդեան, ամեն ոք աշխատի իւր կարողութեան չափով և ամեն ոք վայելէ աշխատութեանց արդիւնքն իւր կարօտութեան չափով:

Որպէս զի այս այսպէս լինի պէտք է նաև որ ժողովուրդն կառավարութեան ղեակն իւր ձեռքին մէջ ունենայ:

Սպասուած արդիւնքն այն է թէ հարուստ և աղքատ, բարձր և ցած, բռնաւոր և տկար չմնար, և ընդհանուր գոհութիւն կը տիրէ:

Այս ամենն ըսել դիւրին է, և շատ հաճելի կը հընչէ ժողովրդեան ականջին, և շատ գեղեցիկ, արդար դրութիւն մի լինելու երևոյթն ունի. բայց տակաւին փորձուած չէ:

Եւ ո՞վ և ո՞ւր պիտի յանդգնին մարդիկ փորձել ընկերվարական դրութիւնն:— Ամեն մարդ իւր կարողութեան չափով պիտի աշխատի եղբր: Ո՞վ պիտի որոշէ ամեն մէկուն կարողութեան չափն և առաջնորդին տեսակըն. ո՞վ պիտի որոշում ապ թէ Ա պատկերահան և Բ կօշիկ ներկող լինելու յարմարութիւն ունին:—Ամէն ոք իւր պիտոյից համեմատ պիտի վայելէ: Ո՞վ պիտի ճշդէ իւրաքանչիւրի պիտոյից չափն:

Դժուար է երևակայել ուրիշ դրութիւն մի որ այսքան կնճռուտ լինի, այսքան վիճի և դժգոհութեան դուռ բանայ:

Բ

Սակայն ի՞նչ հարկ կայ խօսիլ անփորձելի դրութեան մի փորձանքներուն վերայ երկարօրէն: Այդ դրութեան հիմն ինքնին, որ հաւասարութեան սկզբունքն է, բոլորովին խախտու է:

Ընկերվարականք գիտական կը կոչեն իրենց դրութիւն: Բայց եթէ գիտութիւնն բան մի աներկբայելի կերպիւ ապացուցած է, այն ալ սա է թէ մարդիկ հաւասար չեն:

Գիտութիւնն կը հաստատէ թէ մինչեւ անգամ մի և նոյն մարդկային ցեղին վերաբերեալ անհատներն ընդունակութեանց կողմանէ շատ անհաւասար են: Այս անհաւասարութիւնն ակներև է իմացական, բարոյական և կամական կարողութեանց մասին, ինչպէս ֆիզիքական ուժի և գեղեցկութեան մասին:

Այս անհաւասարութեանց արդիւնքն է մրցանք վասն գոյութեան ըսուած մեծ օրէնքն, որոյ միջոցաւ տեսակներն ու ցեղերն կը մաքրուին, կը զօրանան և կը բարձրանան:

Աշխարհս այսպէս շինուած է.— հոն անհաւասարութիւն կայ, և անհաւասարութեան հետեանք մըր-

ցումն կայ, և մրցման արդիւնք լաւագոյնին յառաջդիմութիւն և ծաւալումն կայ:

Այո՛ աշխարհի վերայ տկարներ, ապուշներ, անճարակներ, տգեղներ կան հետեալէս աղքատներ կան, և նոքա որք հզօր են և ուշիմ և բարի, կը համակրին կամաւ, կ'օգնեն սիրով հիւանդին, աղքատին և անկարին:

Վերցուր աշխարհէն անհաւասարութիւն, և ահա նոյն ժամայն կը փակես մրցման, զարգացման, գթոյ, երախտագիտութեան և առաքինութեան ասպարէզն:

Աշխարհ անհաւասարութեան հիմանց վերայ հաստատուած է, և ոչ ոք կրնայ իւր տրամաբանութեան զօրութեամբ այդ հիմն փոխել: Ամէն ընկերական դրութիւն որ անբնական է, դատապարտուած է փշուրելու քննութեան օրինաց յաւերժական ժայռին զարնուելով:

Փ

Ընկերվարականութեան հակադիտական լինելն ցուցնել յետոյ կրնանք նաև ցուցնել նորա հակիմաստասիրական լինելն:

Ընկերվարականութիւնն նիւթական (materialiste) իմաստասիրութենէ ներշնչեալ է: Ընկերվարականք այնպէս կը կարծեն թէ մարդիկ երջանիկ և գոհ կը լինին եթէ աղքատ չլինին, եթէ բարօրիկ լինին, և եթէ քան զիրենք հարուստ և բարձր մարդիկ չգտնուին իրենց շուրջ:

Այս դրութեան կ'առարկեմք թէ, եթէ տնտեսական հաւասարութեան շնորհիւ ընդհանուր բարօրութիւն յառաջ բերել կարելի իսկ լինէր, ոչ միջոցն արդար և ոչ արդիւնքն պանծալի պիտի լինէին, վասն զի հաւասարութիւնն արդար չէ, և ոչ ալ բարօրութիւնն երջանկութիւն է:

Աշխարհս յօրինուած չէ իբրև մեծ գործանոց մի, ուր ամենայն բաղձալի առատութեամբ բարօրութիւն չիւնուի:

Քաղաքակիրթ ընկերութեան գերագոյն և անդրագոյն մոլատակն է ազնիւ և հզօր բնաւորութիւն շինել անհատներուն մէջ: Ընկերական զարգացումն պայման և միջոց է անհատից զանգագման:

Կ'ընդունիմք թէ անհատներու նիւթական բարօրութիւնն կամ թշուառութիւնն մեծ ազդեցութիւն ունի նոցա բնաւորութեան վերայ: Ձգաւոր և թշուառ, անոք և անմխիթաթ նիւթական վիճակի մէջ գտնուող անհատներ դիւրաւ կը կորուսանեն իրենց լաւ բնաւորական գծեր: Պէտք է դիտել սակայն թէ անմխիթաթ և անօգնական ջգաւորութիւնն է որ կ'աւրէ բնաւորութիւնըն, մինչ այնպիսի անհատներ որք իրենց հիւանդութեան, աղքատութեան, նեղութեան մէջ կ'ընդունին օգնութիւն կամ կը տեսնեն համակրութեան անկեղծ ցոյցեր, փոխանակ վատթարանալու կ'ազնուանան:

Եթէ ընկերվարականներն աշխատէին այնպիսի օրէնքներ ընդունիլ տալ կառավարութեանց որով գործաւորաց վիճակն բարւոքէր, և որով մանկունք և կանայք գործանոցաց մէջ աշխատելու այսպէս չստիպուէին ի վնաս ընտանեկան կազմակերպութեան և հանրային բարոյականութեան, բոլոր իմաստուն և բարի մարդիկ իրենց հետ պիտի լինէին:

Բայց ընկերվարականաց ձգտումն այդ սահմանաց մէջ չամփոփուիր: Նոքա չափազանց չարիք կը վերադրեն աղքատութեան, չափազանց վտանգ կ'ընծայեն դժբախտութիւնը:

Չարեաց ուրիշ աղբիւրներ կան, սակայն: Անցեալ օր թիֆլիզի հայ լրագրաց միոյն մէջ կարդացինք թէ սովեալ գաղթականաց ոմանց դրամ տրուած է որ հաց գնեն, և նոքա ոգելից ըմպելիքի տուած են դրամն: Տարին քանի՞ միլիոններ կը վատնեն գործաւորք ըմպելեաց համար, զորս կրնային և պարտէին գործածել ի-

րենց և ընտանեաց կարեւոր պիտոյից համար: Եթէ քըն-նութիւն կատարուի պիտի տեսնուի թէ մի և նոյն վարձ քըն ընդունող երկու եւրոպացի գուժաւորաց մին թըշ-ուառ, դժգոհ անհանգարտ է, միւսն՝ ունի միւլթարա-կան վիճակ: Ինչո՞ւ, զի վերջինն իւր թոշակի ամբողջն կը յանձնէ իւր կնոջ, մինչ առաջինն՝ կէսն կամ մէկ մասն կուտայ գինեպանին...

Ուրեմն աւելի թոշակ առնելով և նուազ գործելով չէ միայն որ գործաւորք բարօրիկ պիտի լինին. նոքա պարտին գիտնալ գործածել գրամի զոր կը շահին. և գրամի ըստ արժանւոյն գործածելու համար պարտին ունենալ կենցաղոյ ուղիղ սկզբունք:

Ընկերվարականութիւնն չտար այդ ուղիղ սկզբ-բունք, չմշակեւ պարտքի զգացումն գործաւորաց, այլ ոյժ կուտայ պահանջոտ և դժգոհ տրամադրութեան, և գործաւորք դրամ կը պահանջեն չապելու համար:

Այն սոսիալ—սեմոքրատ ոգին որ Հայոցս ուսեալ և հարուստ դասերուն կը վայելէ, է սէրն որով աշխա-տին անուսին ուսում տալ և աղքատին կարողութիւն ինքն իրմով իւր նիւթական վիճակ բարեփոխելու: Նա որ ժողովրդեան ամենկողմանի դարգացումն տեսնել կը սի-րէ, պարտի նոր սերունդներն ոչ թէ մրցումէ ազատ կացուցանելու բաղձանօք ծրագրել այլ զայնս յարմար կրթութեան շնորհիւ յաջող մրցման պատրաստել. մըր ցելու կարող ընել զնոսա ոչ թէ մրցելու անկարօտ, ոչ թէ դրամագլուխն հարստին ձեռքէն առնուլ այլ աղ-քատածին սերունդն կարող ընել դրամագլուխ ձեռք բերելու և զայն ըստ արժանւոյն գործածելու:

Դ

Մեր ընկերվարականաց քան զամենայն տկար կե-տն չյիշեցինք դեռ: Նոքա Հայաստանի համար «ռամկա-վարական ինքնօրինութիւն» հարկաւոր կը համարին, և նոցա ռամկավարականն շատ աւելի ազատական գրու-թիւն մ'է քան հանրապետականն:

Բաւական չէ որ կառավարական գրութիւն մի ինքնին լաւ լինի, պէտք է որ այն յարմարի կառավա-րելի ժողովրդեան: Միապետութիւնն օրհնութիւն մ'ե-ղած է կէս քաղաքակիրթ ժողովրդոց, և հանրապետու-թիւնն կործանման պատճառ եղած է բազմաց: Ով որ Օսմ. Հայաստանի վիճակն կը ճանաչէ ի մօտոյ, պիտի ընդունի թէ ռամկավարական, մինչ իսկ հանրապետա-կան կառավարութեան համար հասուն չէ այն, և ոչ ալ պիտի լինի մօտաւոր ապագայի մէջ: Տեղւոյ անձկու-թիւնն չներբեր մեզ ցուցնելու թէ Ֆռանայի և Ամերի-կայի ժողովրդոց համար իսկ չափազանց շատ է նոյն ին-քն հանրապետական գրութիւնն:

Ըստ մեզ ժողովուրդն մեծ մարմին մ'է բոլորովին նման մարդկային մարմնոյն. և քան զամենայն լաւ կազ մակերպեալ ազգային մարմինն այն է յորում ոչ թէ ամ-բողջ մարմինն ուղեղի դեր յանձն կառնու, այլ ուղեղ մի կայ կառավարող:

Հայաստանի ժողովուրդն կառավարուելու պէտք ունի ոչ թէ կառավարելու: Երբ «ինքնօրինութիւն» կը պահանջենք Հայաստանի համար, ըսել չենք ուզեր թէ ռամկաց ձեռքն պիտի յանձնուի կառավարութեան ղեա-կըն, ինչ որ զայնս յանիշխանութիւն մատնել կը լինի, այլ թէ Հայ ժողովուրդն պիտի ունենայ վարչութիւն մի իւր ազգային, կրօնային և տնտեսական մասնա-ւոր պահանջմանց յարմար, իւր ազգային հանճարին ազատ զարգացման և արտայայտութեան նպատաւոր: Ռամիկ ժողովուրդն ինքն չգիտէ իւր բարոյական պէտ-քերն, չունի իւր ընդունակութեանց գիտակցութիւնն. ազգին զարգացեալ, բարձրագոյն դասն է որ պիտի վա-րէ զնա ազգային յարմար օրինօք:

Ինչպէս ամէն քաղաքակիրթ ուսող ազգի մէջ այն պէս մեր մէջ պիտի լինին բուռ մի մարդիկ խորին բազ մակողմանի մշակութեան հասած որք խորհուրդ պիտի

տան. պիտի գտնուին ոմանք ալ որ կառավարելու տա-ղանդ ցոյց պիտի տան — վասն զի քան զամենայն հան-ճարեղներն անպատճառ չեն ունենար վարչական ձիրք— և պիտի գտնուին ժողովրդեան անհուն մեծամասնու-թիւնն զոր պէտք պիտի լինի կառավարել:

Հայաստան կարօտ է Հայ իշխանի մի որ ունենայ գլուխ և սիրտ մշակեալ, և կառավարելու ձիրք, զօրա-ւոր, անկաշառելի, արդարակորով բնաւորութիւն: Այդ իշխանի քով պիտի լինի երեսփոխանական ժողով մի, ազգային խորհրդարան մի առաւել կամ նուազ հան-գոյն Պուլկարականին, Յունականին ևն, և Հայ իշխանա-պետութիւնն հարկատու պիտի լինի Սուլթանին:

Մեր գլխաւոր հոգն և աշխատութիւնն պէտք է լինի այնպէս աշխատիլ Հայաստանի մէջ որ ժողովրդեան դեռահաս սերունդն գոնէ բաւական մշակուած գտնուի կառավարուելու համար առանց բռնապետութեան...: Բռն-նապետութիւնն այնպիսի բարոյական աւերում գործած է մեր երկրին մէջ որ ժողովուրդն կարելի է կառավա-րել միայն աստիճանաբար վարժելով զնա ազատութեան, փոքր առ փոքր մասնակից ընելով զնա յառավարական գործոց: Հարկ պիտի լինի երկու սերնդոց յաջորդու-թիւնն մինչև որ կրթութիւնն բաւական ընդհանրանայ և քաղաքական բարքերն տակաւ փոխուին:

Ե

Այս երկար յօդուածի նպատակն չէ Հնչակեան կուսակցութիւնն հարուածել: Հնչակեանք բաւական խոհուն կուսակցութիւն մ'են հասկնալու համար բուն նպատակն այս քննադատութեան: «Հայք» գործիչներու ի մի մարմին կազմակերպութիւնն կը ջատագովէ, և այս յօդուածով կը ջանայ Հնչակեանց ցուցնել թէ պառ-տին երկրորդական կետերու մասին այնքան պահանջոտ չլինիլ: Այս սողներն գրողն Հայերն ուսումնասիրած է Հայաստանի, Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ մէջ, ինչպէս նաև յարտասահմանի, և կը վստահեցունէ զիրենք թէ «ռամ-կավարական» ինքնօրինութիւնն աղետաբեր միայն պիտի լինէր Հայոց համար, եթէ հնարաւոր լինէր:

Ուրեմն գործիչք թող կատարեալ համաձայնու-թիւն չպահանջեն միանալու համար: Թող գործակցին ինքնօրինութիւն ձեռք բերելու նպատակաւ և թողուն պապագային զայն որակելու հոգն:

Եթէ իրարու կարծիք յարգել և երկրորդական կե-տերու մէջ իրարու զիջանիլ չգիտնամք, փրկութիւն չկայ մեզ:

ՆԱԽԵԱ Կ. ՊՈԼՍԷՆ

2 Դեկ. 91 Կ. Պոլիս

Օգոստոսի նախարարական տաքնապի պատճառ ե-ղող դաւադրութեան մեղսակից անդամաց դատաստան փութով յառաջ կը տարուի Երևոյի Կայսերական պա-լատի մէջ, չըջած գաղտնի դրոյցներու համաձայն ամէն շաբթու անձայն աքսորներ տեղի կ'ունենան հեռաւոր վայրեր, և այս փորձանք կը պայթի սոսկ նոցա գլխին որք չունին համեմատաբար այլոց պէս կարող կուսակ-ցութիւններ, և Երևոյի մէջ բանտարկեալ համիտին յանձնապարտ չէ կարելի վճռել երբ ի հաշիւ կ'առնէ այդ կուսակցութեանց խնդիրն: Արդէն ամեն կողմէ յե-ղափոխութեան ժխտներ կը լսուին, Ալպանիացիներ, Յոյներ, Կրեւտացիք, Արաբք, Հայք և նոցա յարուցած աղմուկներ չեն մոռցուիր անշուշտ. և եթէ սեղմումով առաւել կատարի վիճակի ալ հասցունէ այդ կուսակցու-թիւնք թուրքիա ամենածանր վիճակի մը կ'ենթարկուի:

Սխալ պէտք է ըմբռնել այն լուր ըստ որում Բեա միլ և Ղազի Օսման փաշաներն աքսորուած են, նոքա կը մնան ի Պոլիս բացարձակ հսկողութեան տակ. մերթ ընդ մերթ կը կոչուին ի պալատ ենթարկուելու համար գիշե-րային և ցերեկեայ հարցաքննութեանց, որոց Համիտ ին-քըն ներկայ է և երբեմն ալ ինք կանէ ամբաստանելոց հարկ եղած հարցումներ, Բեամիլ և Օսման փաշաներ բնական կերպով պիտի դատապարտուին արեւի լոյսը չտեսնելու և մութի մէջ անցնել պիտի ստիպուին իրենց կեանք եթէ ո և է անտեղութիւն չպատահի:

Լոնտոնի թրիքական նախորդ դեսպան Միւլգիւրիւս փաշաի մահուան առթիւ շաբթուս եղած հրատա-

րակութիւնը կը ծանօթացնեն թէ 114,000 Անգ. ոսկի ժառանգութիւն մը թողած է, սովորական դասակարգէ մը դեպքանութեան բարձրացող մի պաշտօնէի այս հարստութեան սովորաբար կասկածներ կրնայ անթնցընել մեր մտաց մէջ:

Ոստիկանատան մասնաւոր յանձնաժողովին քըննութիւններէն անցնելէ ետք անցեալ շաբթու ի Սեբաստիա իւր հայրենիքն աքսորուեցաւ՝ անդ վեցամսեայ բերդարգելութեան պատիժը կրելու համար, իւր անուն 25 ամեայ մի երիտասարդ. այս խեղճ երիտասարդը անցեալ տարուան ձմեռակալեալներէն էր, և 91 տարուայ մէջ ուրիշ մի քանի անգամներ ևս ոստիկանատուն գտնուած:

Այս շաբթու Գում—Գարուէ Միհրան անուն մի երիտասարդ յարձակուեցաւ Սամաթիայի թատերական ընկերութեան տոմսակի պատճառաւ, թիւրամտութեամբ անկարող պաշտօնէից պատճառով երկու ամիս բանտարկութեան դատապարտուեցաւ, Յեղափոխական մարմնոյ մի անգամ նկատած էին զինք վրայէն գտնելով այդ տոմսակ:

Վանէն հասած նամակներ մասնաւոր վշտով կը խօսին, այս շաբթու Ուրանց գիւղի մէջ քիւրդեր մեծ աւերներ գործած են, նոր Մուսայ Պէյ մը յառաջ եկած է որ միւսէ աւելին կուգէ կատարելագործել, խոտեր այրուած տուններ մոխիր դարձած են երկու ամսէ ի վեր: Քիւրդեր փորձած են սպաննել Ուրուանայ գիւղապետ հաճի Վարդան, ուրիշ մի կտրիճ Յարութիւն անունով Հայն, մարթինի կրակուրոց հարուածներու տակ Ննջած էր քաջ Յարութիւն, իսկ Վարդան ազատած: Մուսան բանտարկուած է:

Շ. Ս.

ՆԵՄՐԿ ԸՅՆԹԷՊԷՆ

Այնթապ 10 Դեկտ. 1891

Դեկտ. 6 ին երկու Հայ երիտասարդ ուսանողներ գոլէճին ճամբուն վերայ յարձակում կրեցին հինգ թուրք սրիկաներէ: Գաւազանի և դաշունի վէրքեր առած և կողոպտուած՝ հազիւ կրցան խեղճ ուսանողներն իրենք զիրենք ձգել գոլէճին պահապանին խուցն: Երբ այս սրտայոյզ և գրգռիչ դէպքին լուրն հասաւ ուսանողաց, սոքա փութացին երթալ ի խնդիր սրիկայիցն, այլ դժբաղդաբար չկարացին գտնել:

Գոլէճին խոհարարն ևս նոյն երեկոյին կը հանդիպի սրիկաներու, բայց չնորհիւ հրազէնին զոր կը կրէր, կը յաջողի սպանալ և ի փախուստ շտապեցողներ վայրենամիտ թրքերն:

Հասկցուած է թէ ոճրագործներն Այնթապի են: Գոլէճին Նախագահ Ֆուլլըր կառավարութեան դիմեց, տեսնենք ինչ արդիւնք կ'ըստանայ:

Պ. Ա.

ՆԵՄՐԿ ԹՐՈՅԷՆ

Թրոյ 4 Յունվար 1892

Մեծ. Խմբագիր,

Յունվար 2 ի շաբաթ երեկոյին Թրոյի Հայ գաղթականներն շատ օգտակար գումարում մը ունեցան, որուն ես ալ ներկայ գտնուելու հաճոյքն վայելեցի իբրեւ այցելու: Ուսեալ և բանիմաց երիտասարդ մը մերձակայ քաղաքէ մը յատկապէս հրաւիրուած ըլլալով գումարման նախագահեց:

Իբր 30 հայրենակիցներ ներկայ էին, որք ժամանակ առաջ կազմակերպուած էին մասնաւոր նպատակի մը համար: Սոյն գումարման մէջ պէտք զգացուեցաւ նորէն նկատողութեան առնելու այդ նպատակն և աւելի ճշդելու: Գիտէք թէ Ամերիկայի բոլոր գաղթականու-

թիւներն ծփացող վիճակ մ'ունին, և շատ անհատներ կը պակսին կամ կ'աւելնան:

Բաւական երկար վիճաբանութենէ յետոյ, ժողովն հաստատեց նորէն ինչ որ ամիսներ առաջ որոշած էր, այսինքն թէ այս ժողովն, իբրեւ Թրոյեան յանձնախումբ մը, գովելի և օգտակար կը գտնէ պատուական «ՀԱՅՔ»ի ջատագոված Միութեան գաղափարն և ծրագիրն, և պիտի ջանայ անոր յաջողութեան օգնելու:


Երկու հազի միայն կային որոնք կ'ուզէին որ այս Յանձնախումբը ուրիշ օգտակար բաներ ալ ընելու նպատակ ստանձնէ, բայց անոնց առաջարկութիւնը մերժուեցաւ, և քուէարկութեամբ որոշուեցաւ որ կեդրոնացումն և գործիչներու միութեան համար եղող ջանքերուն ոյժ տալն մնայ Յանձնախումբին նպատակը:

Ընդունեցէք, Տէր Խմբագիր, յարգանացս հաւաստիքըն:



ԲԱՐԿ

ՄԱՐԶԱՐԱՆ

Գարբիէլեան տպարանին մէջ ընդ մամուլ է գինուորական կրթութեան վերայ գրուած այս դասագիրքն, որոյ ձևերուն և պարունակութեան վերայ գաղափար տալու կ'օգնեն հետեւեալ ձևերն:



1	Կոթն	9	Նախնակապ
2	Մէջք	10	Վերջնակապ
3	Ջախիչ	11	Փող
4	Հեռաչափ	12	Տափան
5	Հրակալ	13	Բերան
6	Փականք	14	Օղակ (սուխի)
7	Չգանք	15	Արմուկն (սուխի)
8	Պահպանակ	16	Սուխն:



ԹԷ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ ԻՆՉ ՕԳՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐ

ԿՐՆԱՆ ՍՈՎՐԻԼ, ԵՒ ԻՆՉ ՇԱՀԱՒՈՐ ԳՈՐԾԵՐ ԸՆԵԼ

Ահա խնդիրն որ զբաղեցոյց մեր գաղթականաց ուշադրութիւնն Հայկական Միութեան 138-դ նստին մէջ, Յունվար 2 ին:

Յաջողեալ ամեն Հայ կը ցանկայ որ իւր Հայրենակիցք գործ ունենան եթէ անգործ են, արհեստ սովորին եթէ ուշիմ են, դրամագլուխ չինեն եթէ գործ ունին, և անկախ գործի տէր լինին (ոչ թէ գործաւոր միան,) եթէ դրամագլուխ ունին:

Բայց ոչ ոք կարող է իւր յանձնարարական նամակներով կամ խօսքերով գործ Հայթայթել անգործին, ոչ ոք կրնայ իւր գործ թողլով երթալ գործ փնտռել ուրիշներուն համար: Ոչ ոք կրնայ արդեամբ և օգտակար կերպով ընել ուրիշի մի անձնական ընելիքը, բայց կրնայ խորհուրդ տալ և բարոյապէս օգնել: Հայկ. Միութեան Գործ. Ժողովն այս խորհրդով ձեռք առած է այս խնդիրն որ Ամերիկայի Հայ գաղթականութեան համար կենսական է, և հրաւիրած է փորձառու Հայրենակիցներէն մի քանիներ խօսիլ գործի այնպիսի առարկէնքերու վերայ որք ցարդ փակեալ մնացած են Հայոց առջեւ, և այնպիսի արհեստներու վերայ զորս աստ սովորելով կրնան յետոյ իրենց Հայրենեաց մէջ ալ գործել ի յառաջդիմութիւն արեւելից և ի դարգացումն Հայ արհեստաւորութեան:

Ատենան բացուեցաւ ատենապետութեամբ Մեծ. Տի. Յ. Թաւաճեանի, և յետ մի քանի ատենական գործոց կարգադրութեան, որոշեալ ատենախօսք կարգաւ ի բեմ հրաւիրուեցան խօսելու:

Տր. Ա. Այվազեան ընդհանուր խորհրդածութիւններով բացաւ ատենախօսութեանց շարն: Ամերիկա եկող Հայերուն մեծ մասն դրամ չաչելու նպատակ ունին, ուստի և այնպիսիք ի հարկէ անկարող են գործի և արհեստի ընտրութիւն ընել. նոքա պարտաւորեալ են ընել ինչ գործ որ գտնել կարենան որպէս զի իրենց եւ իրենց ընտանեաց ապրուստն ձեռք բերեն: Կան նաև երիտասարդներ որք թէև Հայրենիք վերադառնալու միտք ունին, բայց հոս երկար տարիներ մնալ յօժար են. այսպիսիք բոլորովին տարբեր ընթացք մի բռնել պարտին: Սոքա պարտին ընտրել ոչ այնպիսի գործ որ անմիջական ապրուստ կամ շահ կը բերէ, այլ մանաւանդ ներկայ նեղութիւններն համբերութեամբ յանձն առնլով՝ անգղիներէն մէջ դարգանալ, արհեստ սովորիլ, և այնպիսի արհեստ որ թէ՛ այս երկրին մէջ իրենց նիւթապէս աւելի շահաւոր լինի յետոյ թէ՛ Հայրենեաց մէջ վերջապէս բանի գայ և յառաջդիմութեան նոր քայլ մի լինի:

Տի. Արսէմ (ոսկերիչ, անկախ գործի տէր.) յիշեցուց միքանի այնպիսի արհեստներ զորս Հայ երիտասարդք կրնան սովորիլ, հոս գործել և վերջապէս ալ Հայրենիքի մէջ գործել նոյն արհեստ: Այս արհեստներն ահագին մեքենաներու և ահագին դրամագլխի անհրաժեշտ պէտք չունին, ինչպէս գլխարկագործութիւն, կոճակ շիմել, լաստիկ (րըպպըր) շիմել, ապակեգործութիւն ևն.:

Տր. Յովհաննէս Արշակունի խօսեցաւ մի քանի արհեստներու վերայ որք Ամերիկայի մէջ առաւել քան Եւրոպական երկրաց մէջ դարգացած են: Աղօրեպանութիւնըն այս երկրին մէջ շատ ծաղկած է, և եթէ Հայեր սովորին այդ արհեստ աստ, կրնան ոչ միայն Տաճկաստանի այլ և Ռուսիոյ մէջ շատ շահաւոր և պատուաւոր դիրք գրաւել իբրև ամերիկեան աղօրեպան: Ռուսիա ահագին քանակութեամբ ցորեն կուտայ աշխարհի, ըստ մեծի մասին ալիւրի վերածուած: Հայաստանն ալ պիտի աւելի տայ այսուհետև: Ամերիկայի Ռոչէսթըր քաղաքին մէջ երկու Հա-

յեր կան որք աղօրեպանութեան վարպետ են և բարձր թոշակ կ'ընդունին տարիներէ ի վեր: Ամերիկայի լաթ հագնելով չէ որ Ամերիկացի կը լինիմք, պէտք է որ Ամերիկացուց ճարտարութիւններն ձեռք բերեմք: Պատուական արհեստ մ'ալ երկրագործութիւնն է: Երկրագործութիւն ըսելով հասկնանք զայն ընդարձակ առմամբ: Սերմանել և հնձել, պանիր և կարագ շինել, մեղու բուծանել, արջառ, ոչխար, և ձի հասցնել, այս ամենն երկրագործութեան մէջ են: Տեսէք, Տաճիկ կառավարութիւնն դեռ իր ձիերն Հունգարիայէն կը գնէ. մեղք չէ՞ դրամին, ինչո՞ւ մեր բնիկ պատուական դաշտերուն մէջ չկրնան հասցուիլ աշխարհի ընտրելագոյն ձիերուն հաւասարներն:

Տի. Յ. Թաւաճեանն ըստարեց ինքնօգնութիւն կոչուած սկզբունքին կարևորութիւնն Հայոցս համար: Անգործ Հայեր կը դիմեն Հայրենակցաց և կը խնդրեն որ գործ գտնեն իրենց համար, բայց պէտք է գիտնալ թէ՛ այլոց գործ գտնել դիւրին բան չէ. նախ որ անձնական գործեր չեն ներեր պտըտիլ ուրիշներուն գործ գտնելու բարի նպատակաւ, երկրորդ որ փորձով տեսնուած է թէ՛ երբ աղաչանաց զիջանելով ետեւէ կը լինիմք ուրիշին գործ գտնելու, չենք կրնար գտնել, պարտաւ տեղ ժամանակ կը վատնեմք: Յանձնարարականի վերայ ալ շատ յոյս դնել պէտք չէ: Դիցուք թէ անգործ Հայ մի գործածանոցի մէջ գործ մը խնդրէ առանց ու իցէ վարձքի գործելու, տարակոյս չկայ թէ, եթէ ժրութեամբ աշխատի, գործապետն նմա պիտի վճարէ նորա օրտապահիկն, և պիտի աւելցունէ նորա թոշակն կամաց կամաց: Զրի աշխատիլ սկսիլ աւելի լաւ է անգործին քան օգնութիւն խնդրել ուրիշներէն:

Յառաջիկայ նստին մէջ, Յունվ. 16ին, նոյն նիւթին վերայ ատենախօսութիւնք պիտի շարունակուին:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼ-Ք

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Եգիպտոսի խորիմ, Մուհամմէտ Թէվֆիք մեռած է: Վախճանելոյն երկագոյն որդին, Ապպա փաշա, կը յաջորդէ հօրն, ուստի և փութով մեկնած է Վիէննայէն, ուր կը գտնուէր: Երկու տարի է որ վարժարանի ուսումններն աւարտած լինելով սկսած էր քաղաքական և զինուորական ուսմանց հետեւիլ: Առողջ, հաստակաւոր գիրութեան հակամէտ մարդ մ'է, ֆիզիքապէս յոյլ: Զարմանալի իշխանութիւն ունի իւր դէմքի և լեզուի վերայ: Թէև զՓարիզ շատ կը սիրէ, կ'երևի թէ նպատաւոր է անգղիական թեւարկութեան Եգիպտոսի վերայ: Պեսութիւնք իսկոյն ճանաչած են զԱպպա իբրև խորիմ, և նոյն ինքն Նախագահ Գառնոյ շնորհաւորած է զնա:

—Սըր Փրանսիս Բլէյր Ֆորտ կարգուած է անգղիական դեսպան Թուրքիոյ: Նա 1884 ին նախարար էր, և Սպանիոյ Անգղիական դեսպան է 1887 էն ի վեր, բայց արեւելեան դիւանագիտութեան շատ փորձառու չէ և ոչ ալ մասնաւոր հմտութիւն ունի Արևելեան խնդրոյն:

—ԵՖՄԷՆԻ ԱՊՍՏՍՄԲՈՒԹԵԱՆ ատեն սոսկալի վայրագութիւններ տեղի ունեցած են: Սանա քաղաքն 14 Յունվ. 510 հոկա. պաշարուած մնաց 40 հազար ապստամբներէ, և շատ զոհ տուաւ սովի: Քաղաքէն փախչողներն կը բռնադատուէին վերադառնալ՝ քիթն և ականջներն կտրուած: Այն օր յորում թուրք զօրավարն քաղաքն ազատելով մտաւ ներս, սարսափելի կոտորած գործուեցաւ. —բոլոր բռնուած ապստամբներն՝ լինի յաղթուած ապստամբաց բանակէն՝ լինի քաղաքին մէջ գտնուածներն բոլորն ալ ջարդուեցան:

—Բ. Դուռն պաշտօնական յատարարութեամբ մի ծանուցած է թէ Սուլթանն խաղաղասէր և բարեկամական քաղաքականութեան կը հետեւի ամենայն պետութեանց:

հետ, և կը ջանայ իւր միջազգային պարտականութիւններ կատարել առանց ունէ մէկուն դիւրագոյնութիւններն վիրաւորելու: Հետեւապէս օտար լրագիրներ որք Սուլթանին քաղաքավարական ինչ ինչ արարքներուն մեկնութիւններ կուտան, պէտք է գիտնան թէ իրիտ անկողնակալութիւնն և օրինաւոր չէզոքութիւնն է օսմ. կառավարութեան վարմանց կանոնն:

—Պուլկարիոյ Ազգ. Ժողովն օրէնք մի քուէարկած է, որ ստիպողական կը գործէ պուլկարներէն լեզուի գործածութիւնն իշխանութեան բոլոր վարժարանաց մէջ: Եւ որովհետեւ Արեւելեան Բուսմէի մէջ բազմաթիւ յոյն դպրոցներ կան, Յունաստանի ներկայացուցիչն բողոքած է առ պուլկարական կառավարութիւնն ընդդէմ նոր օրինացն:

—Թէհրանի շուկաներուն մէջ ծանուցումներ փակցուած են, որով միւսիւրմանք կը հրաւիրուին ի սուրբ Պատերազմ ընդդէմ Եւրոպացւոց:

—Անգղիական և Ֆրանսական մարտանաւեր Աղէքսանդրիա յղուած են ի պատիւ նոր խափին, որ հոն կը սպասուի այսօր, 15ին:

Բ. Դուռն կը պահանջէ որ Գահիրէի հրապարակին մէջ կարդացուի Սուլթանին հրովարտակն, որով վեհապետն կը հաստատէ նոր խափի պաշտօնն: Նաեւ կը պնդէ որ Թրքական ազգային երգն նուագուի այն առթիւ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հնչակեան հեղափոխական կուսակցութիւնն պաշտօնապէս միացեր է հռչակաւոր Արեւելեան Դաշնակցութեան հետ, որ կազմուած է մակեդոնական, ալպանական ու կրեական յոյն յեղափոխական մասնախմբերէ և որոյ նպատակն է աջակցիլ բռնապետական լծի տակ հեծող Արեւելեան ժողովրդոց ազատման գործոյն:

—Լոնտոնի ամսաթիւթ Լ'Առմէնի տարեկան բաժնեգիրն իջած է 12 ֆրանք 50 սանթիմի (2 ու կէս թալէն):

—Տիգրիսի «Մշակ» էն կը տեղեկանամք թէ Ռուսիոյ Հանրային Կրթութեան Նախարարն չըջաբերականաւ մի առաջարկած է դպրոցաց հոգաբարձուաց կարգադրութիւնն ընել որպէս զի բոլոր դպրոցներու թէ ուղղափառ և թէ քրիստոնէական այլ դաւանութեանց պատկանող ուսուցիչներն և աշակերտք անպատճառ ներկայ լինին տօնի օրերն ուղղափառ հոգեւորականութեան կողմանէ կատարուող մաղթանաց:

—Նոյն թերթին Ստամբուլէն կը հաղորդեն թէ Հայ զինուորական պաշտօնեայ Մանուշարեանց յաւնադաւանութիւնն ընդունած և յաջորդ օրն պսակուած է այն Հայ օրիորդի հետ, որուն հետ ամուսնանալ թոյլ տուած չէր էջմիածնի Սինոթն այն առարկութեամբ թէ վեց աստիճանի ազգակցութիւն կայ երիտասարդին և նշանածին միջև:

—Ֆրանսերէն թերթն, Լ'էքօ Բորիքօ, որ Լուսինեան ցեղին պատմութիւնն երկարօրէն տուած էր անցեալներ, այս անգամ Նորին Արքայական Բարձրութեան Իշխան Լուսինեանի կենդանագիրն և կենսագրութիւնն հրատարակած է: Ուրիշ Փարիզեան թերթ մ'եւս, «Լը Մոնիդէօ» տը Լ'էփառնը տիւ Դուալայլ» նոյնն ըրած է:

Տիգրիսի «Արձագանքն» հետեւալ կերպով կը գնահատէ «Արուեստ Ատենախօսութեան» գիրքն. —

«Այս տարուան վերջին քառորդն աղքատ է Հայ հրատարակութիւններով, սակայն պակաս չեն այնու ամենայնիւ նորանշան հրատարակութիւններ: Խմբագրութիւնս ստացաւ Նիւ-Եորքում 1891-ին տպուած մի Հայերէն գիրք հետեւեալ վերնագրով. «Արուեստ ատենախօսութեան» ի պէտս ազգային վարժարանաց, գրեց Մ. Ս. Գարրիէլեան—Խմբագիր «ՀԱՅԲ» լրագրի: Այս գիրքը, որ ունի 126 ութածալ երես, երեք հատուածից է բաղկացած. (1) հատուածը նուիրուած է ճարտասանութեան

տեսական և գործնական մասին, (2) հատուածում գետեղուած են «զանազան ընթերցուածք», իսկ երրորդ հատուածում «ազգային ընթերցուածք»:

Հեղինակն առանձին ուշադրութիւն է դարձրել ատենախօսի արտաքին շարժողութիւնների վրայ և իւր գրքում վիմագրութեամբ տպագրել է 16 ճարտասանական շարժողութիւնների ձեւերը:

Գրքի ապագրութիւնը մաքուր է և թուղթն ազնիւ, իսկ գալով բովանդակութեան, միայն մի բան կարելի է հաստատապէս եղրակացնել այդ գրքէ, այն է թէ Հայն ամեն կլիմայի և ամեն քաղաքակրթութեան համակերպուել կարող է, որովհետեւ հաղիւ թէ մի տասնեակ տարի է, որ Հայ գաղթականներ կան Ամերիկայում, և ահա նրանք կարիք են զգացել ամերիկական ձեւով կրթուած հառետորներին:

ՇԻՔԱԿՈՅԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍՆ

ԱՄԵՆ ԼԵՉՈՒԱԻ ՅԱՅՏԱՐԱՐԵԱԼ

Շիքակոյի Հերալտն Յունւար 1ի թուովն ծարուներէն, Հայերէն, Հայագիր Թրքերէն, Անգլիերէն, Արգի Յունարէն, Պարսկերէն, Թրքերէն, Արաբերէն, Հնդկերէն, Եբրայեցերէն, Ասորերէն Գերմաներէն, Հունգարերէն, Փոլերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն, Չիներէն, ըՍպաներէն, Տանի—Նորվիկիարէն, Շուեդերէն, Փորթուգերէն, Վոլոքերէն, Իտալերէն, Տրչերէն. Ֆիններէն լեզուօք յայտարարութիւն մի հրատարակած է վերոյիշեալ կարգաւ, իւրաքանչիւր իւր ընդգրկուող և լեզուաւ:

Հայերէն յայտարարութիւնն ձեռագիր գրի տեսակ մ'է մաքուր և դիւրընթերց: Ահաւասիկ պատճէնն. —

Շիքակո Դեկտ. 31 1891

1892ի սկիզբն Աշխարհի Բօլոմպիական ցուցահանդէսն արդէն ըստ բաւականին գրաւած է այն ընդարձակ գետինն զոր ի մօտոյ ամբողջապէս պիտի ծածկէ. ձէքսըն Փարքի հասարակաց պարտիզին մէջ մեծ շէնքերու նուիրումէն ինն ամիս առաջ. իսկ բուն Արուեստահանդիսին հասարակութեան առջև բացուելէն տասն և ութ ամիս առաջ. առանց վարանման կարելի է ըսել թէ գործոյն իւրաքանչիւր մեծ բաժինն կատարեալ կարգաւորութեան մէջ մտած է: Գետինն նախապատրաստութեան յառաջացեալ վիճակի մէջ է, շէնքերու շինութիւններն լաւ յառաջ գնացած են: Դրամային վիճակն յաջողակ և խոստովալից դրութեան մէջ է: Աշխարհի ամեն կողմերէ ցուցանելաց ապահովութիւն տրուած է, որք ընդարձակութեան, շահաւիթ լինելու և պէսպիսութեան մասին նախնիքաց ցուցահանդիսից մէջ ի ցոյց դրուածներն պիտի գերազանցեն: Ամերիկեան Միութեան Կառավարութիւնը և ժողովուրդք էապէս համախոհ են նպաստելու սոյն ձեռնարկին: Քաղաքակրթ աշխարհի ամեն ազգ մեր յաջողութեան համար բարեմաղթութեւն լինելն յայտնած է: Հորիզոնի և ոչ մի կողմն թափի չափ փոքր ամպ կ'երեւի: Ի հակիրճ բան, այս է իրաց կացութիւնն: Մանրամասնօրէն տեղեկագրելու համար հատոր լեցնել հարկ պիտի ըլլայ: Ոչ մի բանէ կը վախցուի, զոր մարդկային իմացականութիւնն, նախատեսութիւնն և զօրութիւնն կարեն արգելու:

Երկնից օրհնութիւնն սոյն ձեռնարկի վրայ ըլլալով յաջողութեամբ պիտի ի կատար հանուի գործն առաւել քան զոր յոյժ խանդավառ և յուսալից անձինք կարեն երեւակայել:

—Նոր-Նախիջևանի Հայոց վարժարանն արհեստանոց մ'ալ ունի, ուր եւրոպական արուեստական դպրոցաց սկզբունքն իրագործուած է: Անդ սղայք կ'ուսանին հիւսնութիւն, մետաղագործութիւն և կօշկակարութիւն:

— «ՀԱՅԲ»-ի 1891 տարին ամբողջ կապուած՝ կը վաճառուի 2 թալէն 5 սէնթի:

—Տի. Մ. Պաղտասարեան անգլիերէն լեզուաւ տետր մի հրատարակած է 54 երեսներէ բաղկացեալ,

«Ձայն մի Արարատ Լեռնէն», յորում Հայաստանի անցե-
լոյ, ներկային և ապագային վերայ կը խօսի: գինն է կէս
թալէն. գնել ուզողներն պարտին դիմել Հեղինակին,
Հետեւեալ Հասցէով—Mr. M. Baghdasarian, 411 Walnut st.
Des Moines, Iowa, U. S. A.

—Լեւոն Մարաշեան անուն երիտասարդին սգալի
մահն ծանուցում է մեր ընթերցողաց: Հետեւեալ գըր-
քերն վաճառուելով իւր այրին և երկու որբերուն պիտի
յղուի դրամն.— 1 Օլլէնտորֆ, Ֆռանսերէն սովրեյու
(անգղիերէն): 1 Բառարան Գաղ.-Հայ.-Տաճկերէն: 1 Ու-
էպսթըրի Համառոտ բառարան: 1 Անգղիերէն երկրաչա-
փութիւն: 1 Անգղիերէն դասագիրք Անգամագննութե-
ան, Բնախօսութեան և Առողջաբանութեան: 1 Բառարան
անգղիերէնէ տաճկերէն (ընտհաուդ): 1 «Գաղիերէն ըն-
թերցարան, նոր դրութեամբ»: 1 «Առաջին գիրք գաղ-ի
Հայ թարգմանութեան, Ռ. Յ. Պէրպէրեան»: 1 Տաճկերէ-
նէ ի տաճկերէն բառարան: 1 «Նախակրթարան Փռանսե-
րէն լեզուի»: Ո՛վ որ այս 10 հատորներն մէկէն գնել
կ'ուզէ 5 թալէնի, կրնայ գրել առ Mr. H. G. Nergarian,
271 Woodward Ave, Detroit, Mich.

—Մենէ խնդրուած է Հետեւեալն ծանուցանել.—
Պ. Մարտիրոս Տուտիկեան, բնիկ վանեցի, երկու երեք
տարի առաջ Ամերիկա եկած է, և այժմ ուր ինչէն յայտ
չէ. նորա կին և երեք զաւակն ըստստիկ մտատանջու-
թեան մէջ են: Ո՛վ որ տեղեկութիւն ունի նորա մասին,
Հաճի Հաղորդել «ՀԱՅԻ» ի խմբագրութեան:

—Տի. Կիւլապի Կիւլպէնքեան, որ ի 53 Cedar St.
Նիւ-Եորք ճիւղ մի Հաստատած է Կիւլպէնքեան Համբա-
ւաւոր վաճառատան, այս անգամ շրջաբերական թղթով
մի ծանուցած է Նիւ-Եորքի վաճառականաց իւր Հաստա-
տումն և իւր ձեռագիր ստորագրութիւնն:

—Գոհութեամբ ստացանք Յարութիւն Պէրպէր-
եան (ատենապետ) և Մ. Տէր-Կարապետեան (ատենադ-
պիր) տեարց ստորագրութեամբ նամակ մի որ կը տեղեկա-
ցունէ մեզ նոր ընկերակցութեան մի ևս կազմութիւնն
Ամերիկայի Հայոց մէջ: Այս ընկերութեան անունն է «Ու-
սումնասիրաց Ընկ. Մէջրայի» և նպատակ ունի Մէջրայի
(Խարբերդի մօտ) Հայ վարժարանաց յառաջդիմութեան
աշխատիլ: Առ այս յարմար դատած են յատուկ նամա-
կաւ իրենց Հետ դաշնակցութեան Հրաւիրել Մէջրէի Ս.
Սահակեան Ընկերութիւնն, Դպրոցասիրաց Ընկերութիւ-
նը և Ս. Սանդխդի Ընկերութիւնն:

LANDMAN & SONS,


ՎԱՃԱՌԱԿԱՆ

ՄԱՐԴՈՅ ԵՒ ՏՂՈՅ ԶԳԵՍՏՈՒՅ

ՎՍՏԱՅԵԼԻ ԱՊՐԱՆԵՔ ԵՐ

ԶԱՓԱՐՈՐ ԳԻՆ՝

ԵՐՐՈՐԴ ԵՎԻՆՈՒ, ԱՆԿԻՆ 26 Դ ՓՈՂՈՑԻՆ



JOSEPH LAJOIE
ԺԱՄԱԳՈՐԾ ԵՒ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ
231 FRONT ST.
WORCESTER MASS

Այս քաջածանօթ վաճառատան մէջ
լաւ ապրանքներն կը տրուին Հափա-
ւոր գնով, և ժամացոյցներ կը նո-
րոգուին խնամով ի ձեռն Հայազգի
ճարտար ժամագործ Տիար Փրոտի,
որ նոյն վաճառատան մէջ գործելով
անգղիերէն խօսիլ Հալիտոյ Հայոց
մասնաւոր գիւրութիւն կ'ընծայէ:

PHARMACIE FRANCAISE, NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE

NEW YORK CITY

16 և 17 ըր փողոցներու միջև արեւելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ԲԱՌԳԻՐԻՐ ԳԱՂԶԻԵՐԷՆ - ՀԱՅԵՐԷՆ

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
ԵՒ

ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընտիր թղթի վրայ, մերձաւորապէս 1300 ձեւերով,
մեծադիր քառաձալ, մօտ 300 թերթերէ բաղկացեալ:
Ի վերջ երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն—Գաղ-
ղիերէն Բառագրոց:

ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻՔԱԶՈՒՆԻՈՅ
Լոյս տեսած է Առաջին Հատորն, 150 թերթ, 627 գեղե-
ցիկ ձեւերով: Բացուած է բաժանորդագրութիւն երկու
Հատորին ի միասին:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարումն բաժանորդագնոյ երկու Հատորին
'ի միասին:

Բ. Բաժանորդագինն է Փր. 50 (20 ուրլի):

Գ. Բաժանորդագրութիւն կը շարունակուի մինչ ցվեր
1891 տարւոյս:

Դ. Բաժանորդագրութեան պայմանաժամն «աւարտել է
յետոյ» գինը պիտի բարձրանայ:

Ե. Բաժանորդագրողը պիտի ընդունին անդորրագիր
'ի վարչութեան Տպագրատանս՝ դրամոց ստացման
մասին:

Զ. Բաժանորդագրողը պիտի ընդունին Առաջին Հատո-
րն անդորրագրին հետ 'ի միասին. իսկ երկրորդ
Հատորն՝ այն ինչ տպագրութիւնն աւարտի:

«Հայք» ի Խմբագրատունն, յատուկ Հրաւիրմամբ Վե-
նետոյ Մխիթարեանց Տպարանապետին, Բաժանորդա-
գրութիւններ կ'ընդունի Հ. Գալունոյն ըստարանին և
Հ. Ալիշանի գրքերուն Համար, ինչպէս նաև «ԲԱԶՄԱ
ՎԷՊ» Հանդիսարանին Համար:

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱՊԵՏ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և Հափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ